10722

С31-К
1179
704

Մ. ԿԵՆՏ. ԲՅՈՒՐՈՅԻՆ ԿԻՑ ԿՈԼՎԱՐՆԵՐԻ
ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Ա-70

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 1

ԱԶԳՆՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԻՈՆԵՐ - ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ
ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻ
№ № 1, 2, 3, 4 ԴԱՍԵՐԻ ՀԱՄԱՐ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԹԻՖԼԻՍ — 1930
Ստաբարվեցավ Սախելմծիփո Դեմոմցեվրբա
«ՍԱԼԵՆԼԴԱՄԻ»

ЗКЮП
Ա-70

1930
2-я типография Госиздата Грузии, ул. Ленина, № 3.
Гл. 2022. Зак. 608. Тир. 2000

1 DEC 2009
24 SEP 2006

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 1

Ազգային շրջանների յեվ հանրապետությունների պիոներ-աշխատավորների հեռակա դասընթացների կուրսանտների № № 1, 2, 3, 4 դասերի համար

Առաջադրության նպատակը

Առաջին. — Պարզել, թե ամեն մի կուրսանտ ինչպես է մշակել 1, 2, 3, 4 դասերում շոշափած հիմնական խնդիրները և ինչպես է ըմբռնում, պատկերացնում այդ խնդիրները, ինչպես է վերակառուցում աշխատանքը կոլեկտիվի մեջ, մի խոսքով—ինչպես է գործնականորեն կիրառում թեորիան։

Յերկրորդ. — Պարզել, թե ինչ թերություններ ունի ամեն մի կուրսանտ ուսման ընթացքում, ինչ դժվարություններ յե հանդիպում նա դասը մշակելիս, ինչ սխալ բացատրություններ է տալիս այս կամ այն հարցին։ Աջակցել նրան ուսման մեջ և մատնանշել նրա այն սխալներն ու թերությունները, վոր նա անում է խնդիրները մշակելիս և բացատրություններ տալու ժամանակ։ Այսպիսով միայն Դասընթացային Բաժինը հնարավորություն կունենա ժամանակին

10722

13.02.2013

խորհուրդներ (կոնսուլտացիա) տալու ամեն մի կուրսանտի այն թերությունների շուրջը, որ նա յերևան է հանում ստուգողական առաջադրությունների միջոցով։

Յերրորդ. — Կազմակերպչական - մեթոդական աջակցություն ցույց տալ ամեն մի կուրսանտի, որպեսզի նա կարողանա կազմակերպված աշխատանքով մշակել ուսման ամբողջ նյութը—դասընթացների ծրագրի շրջանում։

Ինչու՞մն է կայանում այդ առաջադրության նյութը

Այս առաջադրությունը հնարավորություն է տալիս կուրսանտին պարզել մանկական կոմմունիստական շարժման հիմունքները. միաժամանակ ցույց է տալիս, թե ինչպես պետք է կազմակերպել այդ դասերը մշակելու մեթոդիկան, տալիս է ստուգողական թեմաների այն ցանկը, որի վրա ուշադրություն պետք է դարձնի կուրսանտը դասը մշակելու ժամանակ։

I. Առաջին յեվ յերկրորդ դասերը շաղկապող հարցեր

1. Մանկական կոմմունիստական շարժումը, որպես կոմմունիստական դաստիարակության հատուկ ձև, նրա ուրույնությունն ու առանձնահատկությունները։

ա. Ինչումն է կայանում պիոներ կազմակերպության դասակարգային էությունը։

ՀՍՍՌ-Ամ ԳԿԳ
Ս. Հմ. Ա. Մաշտոցի անվան

61160-67

բ. Մանկական կոմմունիստական շարժման մանկավարժական արժեքը։

գ. Ի՞նչպես է կառուցված պիոներ կազմակերպությունը իր հատուկ խնդիրներն իրականացնելու համար. պարզել այդ կազմակերպության առանձնահատկությունները — ինչով է տարբերվում նա այլ կազմակերպություններից (կուսակցություն, կոմյերիտմիություն, պրոֆմիություն, դպրոց և այլն)։

II. Ինչպես է կառուցում իր աշխատանքները պիոներ կազմակերպությունը

(2-րդ դասի համար)

Այս դաս-թեմայում պետք է պարզել՝

ա. Վորո՞նք են ներկա շրջանի պիոներ կազմակերպությունների աշխատանքի առանձնահատկությունները և վորո՞նք են այդ աշխատանքի բովանդակության հիմնական գծերը։

բ. Վորո՞նք են պիոներ կազմակերպությունների մեջ տարվելիք մեր աշխատանքի սիստեմի հիմնական խնդիրները։

գ. Ի՞նչ անհրաժեշտ պայմաններ են հարկավոր կոլլեկտիվում աշխատանքները ճիշտ, կանոնավոր տանելու համար — ինքնագործունեություն, մանկական ակտիվ, պրոեկտների մեթոդ, սոցմրցակցություն, հարվածայնություն։

III. Կարդեր պատրաստելու խնդիրն ու պիոներ կազմակերպությունների մանկական ակտիվը

(4-րդ դասի համար, կոլվարն ու մանկական ակտիվը)

ա. Ինչպիսին պետք է լինի կոլվարը, ինչ ունակություններ և հատկություններ պետք է ունենա նա։

բ. Կոլվարի դերը որպես կազմակերպիչ և ավագ ընկեր մանուկների աշխատանքի, ուսման և հանգստի ժամանակ։

գ. Մանկավարժական (դաստիարակչական) ազդեցության և կոմմունիստական դաստիարակության ինչ միջոցներ պետք է կիրառի կոլվարը կոլլեկտիվում և ընդհանրապես մանկական միջավայրում։

դ. Կոլվարի դերը կոլլեկտիվի խորհրդում և խորհրդի աշխատանքի պրոցեսում։

ե. Ինչպես պետք է դաստիարակել և մեծացնել մանկական ակտիվը — ձևեր, մեթոդներ, գործնական աշխատանքների միջոցով դաստիարակելու նախապատրաստական աշխատանքները կոլլեկտիվում, ոգակում, խմբակում։

Ի՞նչպես պետք է մօակել նյութ-դասերը

Ամենից առաջ պետք է դասը կարդալ, ընդգծել մատիտով հիմնական հարցերը, որոշել դասի նյութի ծրագիրը, ինչպես և թեմայի հիմնական միտքը։ Կարդալուց հետո պետք է անցնել դասի մշակմանը։ Ցերկրորդ անգամ կարդալիս պետք է արձանագրել դասի ամեն մի ստորաբաժանման հիմնական միտքը տետրակում (այն-

պես, ինչպես կուրսանտն է հասկացել այս կամ այն միտքը), միաժամանակ տետրակի առանձին թերթի վրա պետք է գրել չհասկացած բառերն ու հարցերը, որպեսզի հետո բացատրություն ստանա բաժանմունքից, ուսուցչից, ագրոնոմից, կոմյերիտմիության պրոպագանդիստից և այլն։

Բացի դասի նյութը մշակելուց, գործնականորեն պետք է կատարես և հետևյալը։

ա. Մշակված դասի միջոցով պարզիր մատնանշած հարցերն ու առաջադրությունները (Առաջին թեմայից)։

բ. Ստուգիր, թե ինչպես է կոլլեկտիվը կյանքում և աշխատանքների ժամանակ կիրառում մատնանշած սկզբունքները։ Արդյոք դասի մեջ մատնանշված սկզբունքները գործնականում համապատասխանում են կոլլեկտիվի կիրառած սկզբունքներին, թե վոչ. իսկ եթե վոչ՝ ինչո՞ւ։ Կոլլեկտիվի աշխատանքները կազմակերպիր այնպես, ինչպես մատնանշված է դասի մեջ, գործնականում ուսումնասիրիր տվյալ հարցը և ինկատի ունեցիր փորձը՝ գործնական աշխատանքը—թեորիայի հետ կապող այդ հիմնական մեթոդը։

II թեմա.—Ցերկրորդ թեման էլ նույն մեթոդով պետք է մշակվի։ Առաջին անգամ պետք է ամբողջ դասը կարդաս և հետո անցնես թեմայի մշակմանը։ Ցերկրորդ անգամ թեման մշակելուց հետո, պարզիր, թե ինչպես են աշխատանքները տարվում քո կոլլեկտիվում — ունե՞ք աշխատանքի վորոշ սիստեմ և ինչպես է տարվում քո կոլլեկտիվում աշխատանքի այդ սիստեմը, համապատասխանում է այն սկզբունքներին, վորոնք պահանջվում են դասի մեջ, և եթե չի

համապատասխանում, ապա ուրեմն ինչ սիստեմով է տարվում աշխատանքը։ Այս բոլորը պարզելուց հետո, աշխատիր գտնել այն միջոցները, որոնք հնարավորություն կտան կազմելու կոլեկտիվի աշխատանքներն այն ծրագրով, որը ժամանակված է դասի մեջ։ Գործնականում կոլեկտիվի աշխատանքների ընթացքում գործադրիր այս սիստեմը, միաժամանակ ստուգիր այն գործնականում, աշխատանքի պրոցեսում։

III թեմա. — Դասդ կարդա, պարզ ու վորոշ պատկերացրու թեման. դասդ 2 մասի բաժանիր։ Առաջին մասը—կոլվարի դերը, և յերկրորդ — աշխատանքը մանկական ակտիվի հետ։ Դասդ մշակելիս ուրվագիծ կազմիր և կանգ առ այն հարցերի վրա, որ մենք ցույց ենք տալիս առաջադրության սկզբում (III թեմայով)։ Սրանից հետո անցիր նյութի մշակմանը։ Դեռ առաջին մասը մշակիր (կոլվարի դերը), քո բառերով արձանագրիր տեսակում, թե ինչպես ես հասկանում ստորաբաժանումների այս կամ այն հարցը։ Այնուհետև անցիր II մասի մշակմանը (մանկական ակտիվի մեջ տարվելիք աշխատանքների մասին)։ Ցերը յերկրորդ մասն էլ մշակեցիր, ստուգիր քեզ այն ստուգողական հարցերով, որոնք ցույց են տրված դասի մեջ և պատասխանիր այդ հարցերին։ Ցեթե զգաս, որ թույլ ես յուրացրել մի քանի հարցեր — մեկ էլ մշակիր նյութը քեզ համար անհասկանալի այդ հարցերի շուրջը։

Նյութը հիմնովին մշակելուց հետո հետևյալ աշխատանքը պիտի կատարես.

ա. Պարզիր, թե ինչպես ես ինքդ աշխատանքներ տանում կոլեկտիվում։ Արդյոք դու կոլվար ես և ա-

վագ ընկեր կոլեկտիվի աշխատանքները կազմակերպելու ընթացքում. վորպես կոլվար կանոնավո՞ր աշխատանք ես տանում, իրականացնո՞ւմ ես մանկ. կոմ. դաստիարակությունը։

բ. Աշխատանքը կազմակերպիր այն սկզբունքների հիման վրա, որոնք առաջարկված են դասիդ մեջ։ Փորձով ստուգիր այդ կոլեկտիվի աշխատանքների ընթացքում, ուղղիր թերություններդ վորպես կոլվար, յեթե կան, ինչպես ասված է դասիդ մեջ։ Վորոշիր կոլվարի դերը կոլեկտիվում։

գ. Պարզիր, թե ինչպես է աշխատանքը տարվում մանկական ակտիվի մեջ, ինչպե՞ս է աշխատանքի պրոցեսում աճում մանկական ակտիվը, արդյոք հենարա՞ն է դառնում նա կոլեկտիվի ամենորյա աշխատանքների համար։

դ. Գործնական պլան մշակիր կոլեկտիվի, բազայի (նայելով, թե վո՞ր տեղ ես աշխատում), մանկական ակտիվի մոտավոր կարճ ժամանակի աշխատանքի համար. աշխատանքն այնպես կազմակերպիր, ինչպես առաջադրվում է դասի մեջ, ուսումնասիրիր և գործնականապես համոզվիր, թե ինչ կստացվի դրանից։ Ոգտագործիր ակտիվի դասընթացների փորձը դասի մեջ առաջադրված որինակելի ծրագրի համեմատ, աշխատիր հարմարեցնել այդ ծրագիրը քո կոլեկտ., բազայի պայմաններին. յեթե չի հարմարվի, ինքդ ծրագիր մշակիր այդ ծրագրի հիման վրա, որ հարմարվի այն կոլեկ. պայմաններին ու հնարավորություններին, որտեղ դու աշխատում ես և ուրիշ թեմայի համար (քանի որ այդ թեման վերցրել ենք վորպես որինակ)։

Երբ այս դասերը կմշակես այնպես, ինչպես առաջարկված է այս առաջադրության մեջ, պետք է գրել առաջին ստուգողական աշխատանքը։

Առաջին ստուգողական աշխատանքի թեմաները

Սկզբումը մենք քեզ բացատրեցինք, թե ինչպես պետք է դասերը մշակել, ավելի ճիշտը՝ բացատրեցինք թեմաներ մշակելու մեթոդները, իսկ այժմ կբացատրենք, թե ինչպես պետք է կատարել այս յերեք թեմաների վերաբերյալ առաջին ստուգողական աշխատանքը։

Առաջին թեմայի վերաբերյալ։ Գրիր, թե մեր կոլեկտիվը ինչպես է կատարում ԽՍՀՄ-ում պիոներ կազմակերպության առաջը դրված կոմմունիստական դաստիարակության հիմնական խնդիրները։

ա. Ինչպե՞ս է դաստիարակում կոլեկ. սոցիալիստական հասարակության շինարարներին (ինչ մասնակցություն են ցույց տալիս յերեխաները տնտեսական շինարարության մեջ, ինչի՞ մեջն և արտահայտվում նրանց մասնակցությունը), արդյոք կոլեկ. աշխատանքն այնպե՞ս է դրված, որ կարողանա կոլեկտիվիստներ դաստիարակել (արդյոք յերեխաները կոլեկտիվում համերաշխ են աշխատում. նրանց մեջ յեղած կապը)։

բ. Ինտերնացիոնալիստների դաստիարակություն. հասկանում-են յերեխաները մեր հեղափոխական նվաճումների համաշխարհային նշանակությունը և ինչպիսի վերաբերմունք են ցույց տալիս դեպի բանվորներն ու նրանց պայքարը բուրժուազիայի դեմ սոցիալիզմի համար բոլոր կապիտալիստական յերկրներում. ինչ վերաբերմունք են ցույց տալիս դեպի զանազան ազգությունները տեղական պայմաններում։

գ. Յերեխաների դաստիարակությունը հակակրոնական վոդով. ակտիվ մասնակցություն են ցույց տալիս կրոնի և նրա թույնի դեմ, արդյոք ակտիվ անասովածներ են հանդիսանում։

Յերկրորդ թեման։ Յերկրորդ թեմայի վերաբերյալ նկարագրի մոտավորապես հետևյալ հարցերը. ինչպե՞ս է կազմակերպված աշխատանքի սիստեմը ձեր կոլլեկտիվում, գործադրվո՞ւմ են արդյոք մանկական կոմմունիստական շարժման հիմնական սկզբունքները։

ա. Ի՞նչպես են հասկանում պիոներները իրենց նպատակն ու խնդիրները, հասկանո՞ւմ են արդյոք պիոներ-կազմակերպության դասակարգային բնույթը։

բ. Ի՞նչպես է կազմված կոլլեկ. իր առորյա գործնական աշխատանքով կոմ. կուսակց. և կոմյերիտմիության բճճի, գործարանի ու ֆաբրիկայի բանվորների հետ։

գ. Ինչո՞վ է տարբերվում ձեր կոլլեկտիվի աշխատանքը դպրոցի, մանկական գրադարանի, մանկապարտեզի, մանկատան և այլն աշխատանքից (նկարագրեցեք կոլլեկ. աշխատանքի սիստեմը, ինչպես եր կազմակերպվում ձեզանում աշխատանքը մինչև այժմ և ինչպես պետք է կազմակերպել, գլխավոր տարբերությունները վերոհիշյալ կազմակերպությունների աշխատանքներից)։

դ. Ի՞նչով և արտահայտվում յերեխաների ինքնագործունեությունը (առաջ բեր փաստեր, որինակներ այս խնդրի վերաբերյալ քո կոլեկ. աշխատանքի փորձից)։

ե. Ո՞վ և դաստիարակում ձեր կոլեկ. (որինակներով ցույց տվեք, թե ինչ են դարձել այն պիոներները, վորոնք թողել են կոլեկ., ինչ աշխատանք են տանում արտադրության, գյուղատնտեսության և հաստատությունների մեջ)։

Յերրորդ թեման։ Ներկայումս ինչ ինքնուրույնություններ կան պիոներ-կազմակերպության աշխատանքի մեջ և դրա համեմատ ել ինչպես և վերակազմել իր աշխատանքը ձեր կոլեկտիվը։

ա. Ի՞նչ հիմնական խնդիրներ են դրված այժմ պիոներ-կազմակերպության առաջ և մասնավորապես ձեր կոլեկտիվի առաջը, և ինչու կոլեկ. այդպիսի խնդիրներ և դրել իր առաջը։

բ. Ինչով և արտահայտվում պիոներների մասնակցությունը սոցիալիստական շինարարության մեջ, ինչպես և իրագործվում առաջին Համամիութենական պիոներ-հավաքի նակազը, նկարագրեցեք փաստեր, որինակներ կոլեկտիվի աշխատանքի փորձից։

գ. Պիոներները ինչպես են հասկանում իրենց կատարած հասարակական աշխատանքի իմաստը կոլեկտիվում, դպրոցում, հրապարակում, ակումբում, ֆաբրիկայում, գործարանում, կոլտնտեսության մեջ, խորհրդատեսության մեջ (քաղաքական դաստիարակություն կոլեկտիվում, յերեխաների ինքնագործունեությունը, ինչով և արտահայտվում այդ)։

Չորրորդ թեման։ Ցես, կոլվարս, ինչպես եմ աշխատում կոլեկտիվում, իմ դերը։

ա. Ի՞նչպես եմ պատրաստվում աշխատանքի համար (աշխատանքի պլանավորումը, ձևերը, մեթոդները)։

բ. Ի՞նչպես եմ ուսումնասիրում յերեխաներին, նրանց վարքը, կոլեկտիվիզմը, հարցերը, հետաքրքրությունը դեպի աշխատանքը, և սրա հիման վրա ել ինչպես եմ կազմակերպում աշխատանքը կոլեկտիվում։

գ. Ի՞նչպես եմ կազմակերպում յերեխաների ինքնագործունեությունը, ուղղություն տալիս նրանց ձեռնարկությանը կոլեկտիվի գործնական աշխատանքի ընթացքում։

դ. Ցես, կոլվարս, ինչպես եմ կազմակերպել և ինչպես եմ տանում մանկական ակտիվի աշխատանքը; նրա դերը կոլեկտիվում, վերտեղ և ինչպես ե նա աշխատում մեզանում։

ե. Ի՞նչպիսի միջոցներ եմ ձեռք առնում ազդելու դիսցիպլինայի չենթարկված յերեխաների վրա (ի՞նչպիսի ազդեցություն են թողնում այդ միջոցառումները յերեխաների վարքի վրա, ամրապնդում դիսցիպլինան և դաստիարակչական եֆեկտ ստեղծում, ինչով և այդ արտահայտվում)։

Ի՞նչպես գրել սուգղողական աշխատանքը

1. Վերևը թված չորս թեմաներից ընտրիր միայն մեկը, կամ թե ամենաշատը՝ յերկուսը, նայած հնարավորություններին (բայց այս պարտավորեցուցիչ չէ,

պարտավորեցուցիչ է մեկը) և դրա մասին ստուգողական աշխատանք գրիր, պատասխանիր այդ հարցերին, վորոնք ցույց են տրված այս կամ այն թեմայում, (վորը դու կընտրես քեզ համար վորպես որյեկտ, այսինքն՝ վորը դու կհավանես)։

2. Ստուգողական աշխատանքում մի կողմից դու լուսաբանում ես այն, ինչ վոր ստացել ես քո մշակած դասերից, մյուս կողմից դու մեկնաբանում ես կոլլեկտիվի գործնական աշխատանքը դասերի ընթացքում պարզաբանված նյութերի հիման վրա յեղած ուսումնասիրությունից հետո. պարզաբանությունը չպետք է չոր ու տեսական լինի, այլ ստուգված գործնական աշխատանքով կատարված փորձի համաձայն վրա, վորի ճշտությունը լիովին ստուգում է կյանքը գործնական աշխատանքով։

3. Նախ պետք է նյութը մշակել դասերի համեմատ (ինչպես ցույց ենք տվել առաջադրության սկզբին). պետք է այն կարդալ, հետո հարցեր ուրվագծել, վորոնք պետք է ուսումնասիրել և ուսումնասիրության արդյունքը կոլլեկտիվում անցկացնել և այս բոլորից հետո արդեն կազմել ստուգողական աշխատանքը։

4. Այս կամ այն թեմայի մասին (ինքդ կընտրես) ստուգողական աշխատանք գրելուց առաջ կազմիր աշխատանքի պլանը։ Թված թեմաների միայն որինակելի պլանը տուր, պետք է ուրվագծել պլանը ինկատի ունենալով տրված առաջադրության այս կամ այն թեմայի վերաբերյալ հարցերը և տեղական, կոլլեկտիվի, բազայի պայմանները։

5. Պետք է գրել պարզ մտքերի կապակցված վերլուծությունը, այսինքն տալ գլխավորապես հարցի տեսական հիմնավորումը, հետո լուսաբանել փաստերը և դրանից գործնական հետևողություններ հանել, և վոչ թե հարցերի ձևական պատասխանները տալ, վորից շատ քիչ ոգուտ կունենանք թե դու և թե մենք։

Յերբ պատրաստվում ես պատասխանելու ստուգողական աշխատանքով, անպայման ինկատի ունեցիր և առաջնորդվիր հետևյալ կանոններով.

1. Աշխատիր քո մշակած հարցի վերաբերյալ մտքերդ ու հասկացողություններդ լուսաբանել սեղմ, պարզ ու մեկին. փիլիսոփայություն մի անիր, գեղեցիկ բառերի հետևից մի ընկնիր, գրիր այնպես, ինչպես ինքդ հասկանում ես։

2. Գլխավորապես ուշադրություն դարձրու գործնական փաստերի և որինակների վրա, աշխատիր քո հետևողությունները վորևե հարցի մասին ապացուցել կոլլեկտիվի գործնական աշխատանքի փորձից վերցրած փաստերով, որինակներով. նյութի մեծ արժեքը հենց դրանում կերևա։

3. Աշխատանքը սովորական գրելու թղթի յերեք յերեսից կամ դպրոցական տետրակի 5—6 յերեսից ավել չպետք է լինի։

4. Լայն լուսանցք թող, մոտավորապես կես վերշոկ, թե մեկ և թե մյուս կողմից կոնսուլտանտի ուղղումների և ցուցումների համար։

5. Քո գրավոր աշխատանքի առաջին յերեսի սկզբին գրիր անունդ, ազգանունդ, հասցեդ և շիֆրը։

Ծանոթություն. 1. Ստուգողական աշխատանքը պետք է ավարտվի ամ

ՀՀ Ազգային գրադարան
NL0195648

146

շաբաթվա ընթացքում ցույց տրված դասերը մշակելուց հետո. այս հիմնական կանոնը պետք է աչքի առաջ ունենալ։

2. Նրանք, ովքեր կոլեկտիվում չեն աշխատում, ստուգողական աշխատանքը գրելիս պետք է ոգտագործեն իրենց նախկին աշխատանքի փորձը կամ թե հատկապես գնան վորևէ կոլեկտիվ և տեսնեն այնտեղ իրենց հետաքրքրող հարցի վերաբերյալ աշխատանքը։

Ստուգողական աշխատանքը վերջացնելուց հետո մոտդ մի պահիր, ուղարկիր շուտով Դասընթացների բաժանմունքը նայելու և քեզ կոնսուլտացիա տալու։

ՄԿԿ ԿԲ-ի Կադրերի Բաժանմունք
Հեռակա դասընթացներ.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՊԵՏԿԱՆ ԳՐ. ԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀԱՍՍՌ-Арм ССР
Ա. ԻՄ. Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ